

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի N°4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ -ի մաթեմատիկայի ուսուցչի( 10 ժամ) թափուր տեղի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և հարցազրույց (մանկավարժական մասնագիտական գործնական հմտություններ):

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է: (Ձև 1):

2.Բարձրագույն կրթության մանկավարժական որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ),կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական,կամ ուսուցչական գործնեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից:

3.Անձնագրի պատճենը:

4.Ինքնակենսագրություն (Ձև 4):

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում):

6.Մեկ լուսանկար՝ 3 X 4 չափի:

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:

8.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2018 թվականի հոկտեմբերի 3-ից մինչև հոկտեմբերի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժ.10:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2018թ. նոյեմբերի 2-ին , ժամը 14:00-ին**, Արթիկի N°4 հիմնական դպրոցում:

Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Արթիկ, Հակոբյան փ. 8:

Տեղեկությունների համար զանգահարել 098491900: